ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» փետրվարի 2014թ. N________

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12–րդ հոդվածի 1–ին կետի 7 ենթակետի պահանջներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Մայրաքաղաքում շինությունների պետական գրանցումը կատարել ըստ շինությունների գործառնական նշանակության, անկախ հողի նպատակային նշանակությունից:
2. Նախկինում պետական գրանցում ստացած արտադրական նշանակության շինությունների վերագրանցման կարգը մշակելու համար ստեղծել հանձնաժողով:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյան

Նախաձեռնության հեղինակ<br>Երևան քաղաքի ավագանու անդամ Հ. Թոքմաջյան

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքում բնակելի, հասարակական և այլ նշանակության շինությունների սպասարկման համար հաճախ հարկ է լինում կառուցել կաթսայատներ, ավտոտնակներ, ավտոկայանատեղեր այլ արտադրական նշանակության օբյեկտներ, որոնց գրանցումը անշարժ գույքի պետական կադաստրում իրականացվում է ըստ հողատարածքի նպատակային նշանակության, ինչը ընդունելի չէ:

Ելնելով վերը շարադրվածից անհրաժեշտություն է առաջացել Երևանի ավագանու օրակարգ ներկայացնել ներկա նախաձեռնությունը, որի նկատմամբ ընդունած դրական որոշումը պարզություն կմտցնի Երևանի սեփականություն համարվող գույքի կառավարման գործընթացում:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյան

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամ Հ. Թոքմաջյան

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում շինություններն ըստ գործառնական նշանակության գրանցելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունում չեն առաջացնում:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյան

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամ Հ. Թոքմաջյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում շինություններին ըստ գործառնական նշանակության գրանցելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կամակցությամբ Երևանի բյուջեի եկամուտների մասում փոփոխություններ կառուցապատման, կապված շինությունների կադաստրային արժեքի որոշման փոփոխության հետ։

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյան

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամ Հ. Թոքմաջյան